# Հաշիվ վավերագիր
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|
| 14 | Նոյեմբեր | 2019 թ. | Բ | 1336331148 |
| [4] Մատուցման ամսաթիվը | | | | |
| 14 | Նոյեմբեր | 2019 թ. | | |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | | |

| [7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ) |
|---|
| Բ8078528116 հաշիվ վավերագրի փոխարեն |
| [7.1] ՀԴՄ կտրոնի համար |
| |

## Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 2 5 7 6 7 5 3 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [10] Անվանումը | «ԳԱՌԻԴԵԱՄՈՒՍ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) |
| [11] Բանկային տվյալները | Արդշինբանկ ՓԲԸ — N 2470102730400000 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈՒՆ 4հարկ սենյակ112 |
| [13] Լրացուցիչ տվյալներ | |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

| | |
|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 5 0 6 6 3 4 |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [16] Անվանումը | «ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [17] Բանկային տվյալները | ՀՀ ֆին. նախ. աշխ. գործ. վարչ — N 900011180081 |
| [18] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ Խորհրդարանի 6 |
| [19] Լրացուցիչ տվյալներ | |

| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

## [21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| NN Հ/Կ | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափի միավորը | Ընդհանուր ծավալը կամ աշխատանքի ծավալ բաժնի | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Հայերենից անգլերեն լեզվի գրավոր թարգմանություն 08.11.2019թ. -11.11.2019թ. | էջ | 2 | 1000 | | 2000 |
| 2 | Հայերենից անգլերեն լեզվի գրավոր թարգմանություն 08.11.2019թ. -11.11.2019թ. | էջ | 2 | 1000 | | 2000 |
| Ընդամենը | | | | | | 4000 |

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ PETROSYAN MERI 7610870633

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

14/11/2019 13:06:35

Ծառայություն (աշխատանք) ստացող՝ GRIGORYAN SUSANNA 7403690397

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

15/11/2019 17:09:06

# ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

08 նոյեմբերի 2019թ. ք.Երևան

Ես, ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության ավագ դատախազ Ա.Հովհաննիսյանս, ստանալով ՀՀ գլխավոր դատախազի կարգադրությունը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ ՍՈԼՎԵՅԳ ԼԵԼԱՆԴ ՀՈԼԲԵՐԳԻ իրավունքն ապահովելու վերաբերյալ կարգադրությունը և ուսումնասիրելով թիվ 21/32-945-19 վարույթի նյութերը,

*ՊԱՐԶԵՑԻ՝*

20.10.2019թ. Նորվեգիայի Թագավորության /ՆԹ/ իրավասու մարմինների կողմից հետախուզվող ՍՈԼՎԵՅԳ ԼԵԼԱՆԴ ՀՈԼԲԵՐԳԸ հայտնաբերվել և ձերբակալվել է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) իրավապահ մարմինների կողմից:

08.11.2019թ. որոշում է կայացվել Ս.Լ.Հոլբերգի հանձնումը ՆԹ իրավասու մարմիններին թույլատրելու մասին:

ՀՀ գլխավոր դատախազի նույն օրվա կարգադրությամբ հանձնարարվել է ապահովել ՍՈԼՎԵՅԳ ԼԵԼԱՆԴ ՀՈԼԲԵՐԳԻ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավունքի իրացումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է ստորագրությամբ հաստատել (...) քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:

Նկատի ունենալով, որ ՍՈԼՎԵՅԳ ԼԵԼԱՆԴ ՀՈԼԲԵՐԳԸ չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, իսկ Կարինե Գևորգյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնահասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով և 478.4-րդ հոդվածի 2-րդ մասով,

*ՈՐՈՇԵՑԻ*

1. ՍՈԼՎԵՅԳ ԼԵԼԱՆԴ ՀՈԼԲԵՐԳԻ հանձնման թույլատրության վերաբերյալ որոշման անգլերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Կարինե Գևորգյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր BA 2395523, որակավորումը հավաստեղ ՀՀ ԱՆ տեղեկանք 06.07.2010թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

*ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության ավագ դատախազ*
***Ա.Հովհաննիսյան***

*Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:*

Թարգմանիչ՝
2019թ.

«11» 11 2019թ.

Կ.Գևորգյան

# ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

08 նոյեմբերի 2019թ. ք.Երևան

Ես, ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության ավագ դատախազ Ա.Հովհաննիսյանս, ստանալով ՀՀ գլխավոր դատախազի կարգադրությունը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ ԽԱԲԱԹ ԱԼԻ ԱԿԲԱՐԻ ՍՏԱԻԻ (ՍՏԱԵԻ ՍՏԱՅԻ) իրավունքն ապահովելու վերաբերյալ կարգադրությունը և ուսումնասիրելով թիվ 21/32-945-19 վարույթի նյութերը,

*ՊԱՐԶԵՑԻ՝*

20.10.2019թ. Նորվեգիայի Թագավորության /ՆԹ/ իրավասու մարմինների կողմից հետախուզվող ԽԱԲԱԹ ԱԼԻ ԱԿԲԱՐԻ ՍՏԱԻՆ (ՍՏԱԵՆ, ՍՏԱՅԸ) հայտնաբերվել և ձերբակալվել է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) իրավապահ մարմինների կողմից:

08.11.2019թ. որոշում է կայացվել Ս.ՍՏԱԻԻ /ՍՏԱԵԻ, ՍՏԱՅԻ/ հանձնումը ՆԹ իրավասու մարմիններին թույլատրելու մասին:

ՀՀ գլխավոր դատախազի նույն օրվա կարգադրությամբ հանձնարարվել է ապահովել ԽԱԲԱԹ ԱԼԻ ԱԿԲԱՐԻ ՍՏԱԻԻ (ՍՏԱԵԻ, ՍՏԱՅԻ)՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավունքի իրացումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է ստորագրությամբ հաստատել (...) քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:

Նկատի ունենալով, որ ԽԱԲԱԹ ԱԼԻ ԱԿԲԱՐԻ ՍՏԱԻՆ (ՍՏԱԵՆ, ՍՏԱՅԻՆ) չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, իսկ Կարինե Գևորգյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնահասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով և 478.4-րդ հոդվածի 2-րդ մասով,

*ՈՐՈՇԵՑԻ*

1. ԽԱԲԱԹ ԱԼԻ ԱԿԲԱՐԻ ՍՏԱԻԻ (ՍՏԱԵԻ, ՍՏԱՅԻ) հանձնման թույլատվության վերաբերյալ որոշման անգլերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Կարինե Գևորգյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր BA 2395523, որակավորումը հավաստող ՀՀ ԱՆ տեղեկանք 06.07.2010թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն

աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

*ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության ավագ դատախազ* **Ա.Հովհաննիսյան**

*Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:*

Թարգմանիչ՝ «..11..»..11 2019թ.
2019թ.

Կ.Գևորգյան